

ՍԱՍՈՒՆԻ 1894 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

1894 թվականի օգոստոսին Սասունում սուլթանական Թուրքիայի բռնապետական կարգերի դեմ բռնկվեց հայ բնակչության ապստամբությունը, որը հետևանք էր հայերի սոցիալ-քաղաքական իրավազուրկ վիճակի, ազգային դաժան ճնշման և տնտեսական հարստահարության:

Այդ ապստամբությունը, ավելի ճիշտ՝ սեփական գոյության համար մղվող կռիվը խիստ դաժանությամբ ճնշվեց Զեքի փաշայի գլխավորած թուրքական 4-րդ բանակի կողմից: Պաշտոնական տվյալներով Սասունում ավերվեց ավելի քան 48 գյուղ, սրի քաշվեց 10—15 հազար մարդ, 14 հազար 600 մարդ մնաց սոսկալի ծանր նյութական ու բարոյական վիճակի մեջ¹: Թուրքական զորքը կողոպտելով հայերի ամբողջ ունեցվածքը, ողջ մնացածներին ստիպեց ցրվել լեռներում, դառնալ թափառաշրջիկ:

Այդ ահավոր կոտորածը կազմակերպելուց հետո թուրքական բանակի 8000 զինվորներ² իջան Մուշի դաշտը. այնտեղի հայկական գյուղերի բնակիչներին ստիպեցին թողնել իրենց տները, հողերը, ունեցվածքը և դուրս գալ երկրից: Այնտեղ ավերվեցին ավելի քան 20 հայաբնակ գյուղեր: Մուշում և բազմաթիվ այլ գյուղերում տեղի ունեցավ հայերի ձերբակալություններ և բռնի թրջացում³:

Սասունի ղեպքերը լայն արձագանք գտան ամբողջ աշխարհում: Ազգային և համաշխարհային մամուլում տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, գրվեցին շատ գրքեր, որոնցում խստագույն կերպով դատապարտվեցին թուրքական կառավարության վայրագ գործողությունները:

Աշխարհի բոլոր հայաբնակ վայրերից այդ օրերին հայոց կաթողիկոսի անունով հարյուրավոր նամակներ ու դիմումներ էին ստացվում, որոնց մեջ անարգանքի սյունին էին գամվում սուլթանական Թուրքիայի դաժան կարգերը, մերկացվում թուրքական ոճրագործ կառավարության, նրա բանակի, թուրք աղաների ու քուրդ բեղերի գազանությունները: 1894 թ. նոյեմբերի 17-ին Թիֆլիսից մի խումբ հայեր հայոց կաթողիկոսին գրել են. «Ահա մի ամբողջ տարի է, ինչ Տաճկաստանի բոլոր անկյուններում կատարվում է մի սարսափելի երեւոյթ», հարստահարվում ու ոչնչացվում են արեւմտահայերը: Այդ բռնությունները «այնպիսի ծայրահեղ աստիճանի հասան, որ հայ ազգի

¹ Տե՛ս Архив внешней политики России (АВНП), ф. канцелярия, оп. 470, д. 26, т. 1, лл. 213—214

² Տե՛ս «Новое обозрение», № 2369, 1894, հոկտեմբեր:

³ Տե՛ս Հայկական ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, ք. 78—82: Տե՛ս նաև «Մշակ», № 131, 1894, նոյեմբերի 12: «Մուրճ», № 10, 1894, հոկտեմբեր, էջ 1504 և այլն:

մի մասը, մի բուռ աղքատ լեռնականներ ստիպված եղան զենքերով դիմադրել վարչության կամայականություններին և պաշտպանել իրենց մարդկային իրավունքներն ու ընտանիքի պատիվը... Այսօրվա հալածանքների բռն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդը իր մայրենի երկրից...»⁴:

Նույն Թովանդակությամբ նամակներ ու դիմումներ են ստացվել նաև հայաբնակ այլ վայրերից: 1894 թ. դեկտեմբերի 30-ին Բելգիայում բնակվող մի խումբ հայեր գրել են. «Հայաստանի Տարոնո գավառին մեջ... կանոնավոր զորաց ձեռոց եղած կոտորածներեն հետզհետե եկած սոսկալի լուրերը՝ ինչպես ի սփյուռս աշխարհին եղած հայերը, նույնպես և մեզ պելջաբնակ հայերիս խոր սգո և թախծության մեջ ձգեց»⁵:

Արևմտահայությունը ինչպես միշտ, այնպես էլ այդ ժամանակ, իր հայացքը հառել էր դեպի Ռուսաստան և գիտակցում էր, որ սուլթանական ծանր լծից կարող էր ազատվել միայն Ռուսաստանի օգնությամբ:

Հետաքրքիր է 1895 թ. փետրվարի 25-ին (մարտի 9) հեռավոր Սինգապուրում բնակվող հայերի կողմից Ամենայն հայոց կաթողիկոսին հասցեագրված նամակը, ուր նշված է. «Աշխարհալուր և հաստատուն տեղեկությունն անողորմ ու ասոկալի կոտորածուն հազարավոր անմեղ և անպաշտպան, խաղաղասեր և աշխատասեր համազգային մերոց Սասնա, առանց ինչ խտրության հասակի կամ սեռի՝ ի ձեռն անիրավ ու խստասիրտ զորաց սուլտանին տաճկաց տան մեզ արդար՝ մոռանալ երբեմն զի ժամանյալ էմք ավարտ լուսավորյալ ինն և տասներորդ (19) դարու...»⁶:

Բոլոր դիմումներում ու բողոքներում փաստորեն արտահայտվում է այն միտքը, որ Սասունը պաշարված դրության մեջ է, գյուղերը հրդեհվում և ավերվում են, ժողովուրդն անխնա կոտորվում է, ամբողջ Արևմտյան Հայաստանը ավարառությունների, ասպատակությունների ասպարեզ է դարձել, իսկ ժողովուրդը չկարողանալով տանել բարբարոսների հալածանքները, թողած տուն ու տեղ զանգվածաբար գաղթում է դեպի օտար երկրներ:

Արևմտահայերի ապրած այդ ողբերգությունը ծանր վիշտ պատճառեց հայ նշանավոր գրողներ Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Հ. Հովհաննիսյանին, Մուրացանին, Ա. Մատուրյանին, Վ. Փափագյանին, Լ. Մանվելյանին և մյուսներին: Նրանք 1895—1897 թվականների իրենց ստեղծագործությունների մեջ անարգանքի այցուն զամեցին թուրքական մարդատպաններին և գովերգեցին սուլթանական բռնակալության դեմ հայ ժողովրդի հերոսամարտերը:

Վիպասան Մուրացանը իր հրապարակախոսական հոդվածներում և գեղարվեստական երկերում մերկացնում էր արևմտահայության նկատմամբ կազմակերպված ու կազմակերպվող արյունոտ կոտորածների հեղինակներին հովանավորող եվրոպական պետություններին: Նա արևմտահայության փրկության միակ ելքը տեսնում էր նրա պայքարի մեջ:

1895 թ. հայկական կոտորածների մղձավանջալից օրերին վիպասանը գրել է Սասունի ազատասեր ժողովրդի հերոսական ապստամբությանը նվիրված՝ «Ինչպես էին մեռնում» պոեմը⁷: Պոեմի հերոսը՝ քաջ սասունցի Ավոն, արդար վաստակով ապրող ու բռնությանն ընդդիմացող հայ աշխատավոր ու

4 Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ, գ. 82, թթ. 4, 31:

5 Նույն տեղում, ֆ. 56, գ. 46, թ. 14:

6 Նույն տեղում, ֆ. 50, ց. 5, գ. 65, թ. 69—70:

7 Տե՛ս «Լույս», № 3—4, 1907:

խաղաղասեր ժողովրդի ներկայացուցիչն է: Ինչպես հեղինակն է գրում, նրա «հայացքն ահեղ» է, «հասակը՝ հսկա», «բազուկն առյուծ կը վանեն», «բայց այդ բազկով» նա երբեք անարդար դորժ չէր արել, ապրել էր անկախ ու ազատ, բայց միշտ աշխատել ու քրտինք թափել, «որ Ս'ացառը արոտ շինեն», իսկ «Կառ-ծանը՝ արահետ»:

Խաղաղ աշխատանքով ապրող այդ շինականը, սակայն, անողորմ ու անգիշում է հայրենիքի թշնամու նկատմամբ: Եվ ահա, արտը վարելիս նա լուր է ստանում, որ քուրդ ու թուրք հրոսակները գաղտնի ներս են խուժել իրենց երկիրը, իսկ հայ կտրիճները դուրս գալով զավթիչների գեմ՝ արդեն լանցել են «ծորն ու հովիտը»: Սասունցի հերոսը մեն-մենակ նետվում է թվով զե-րազանց թշնամու դեմ: Ամենածանր բազմաթիվ նրան օգնության է հասնում և գնդակներ բերում իր կինը՝ Ալմոն: Նրանք միասին կռվում են մինչև վերջին գնդակը և ընկնում հերոսաբար:

Նույն հայրենասիրական ոգով են տոգորված բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի՝ հայկական ջարդերի առթիվ 1895—1897 թվականներին գրած բազմաթիվ բանաստեղծությունները («Հեզիկ կարկաշով վազում են ալիք», «Մի վհատիր, եթե ավեր», «Գարուն», «Բացված գարուն», «Եվ եկավ գարուն, և անցավ ամառ», «Սգո օրեր», «Նոր դարուն» և այլն), որոնցում բանաստեղծը պատկերում է արևմտահայության ծանր ու օրհասական վիճակը, երգում նրա «տանջանքի օրհներգը»: Արևմտահայաստանը, գրում է Հովհաննիսյանը, դար-ձել է «արյան հովիտ», ուր ամեն ինչ «արյուն են կտրել», երկինքը «դողում է» սրի շաշյունից⁸:

Բանաստեղծ Մատուրյանը Սասունի հերոսամարտերին նվիրված «Հայ մայրերին» վերնագրով⁹ բանաստեղծության մեջ «որդեկորույս» մայրերին հորդորում էր լաց չլինել «հեզ ալգին» համար կռվում ընկած իրենց սիրա-սուն զավակների համար, որովհետև հայրենիքի համար զոհվելը հավասար է հավերժ փառքի ու անմահության:

1894 թ. ամռանը Սասունում տեղի ունեցած անցքերի մասին իրենց կառավարություններին անմիջապես հաղորդում են Թուրքիայում եվրոպական պետությունների դեսպաններն ու հյուպատոսները: Նույն թվականի օգոստոսի վերջերին Կարինի ֆրանսիական փոխհյուպատոսը արտաքին գործերի մի-նիստրին հաղորդում է, որ թուրքական կանոնավոր բանակի մի մեծ ջոկատ հրաման էր ստացել ուղևորվելու Սասունի շրջանը, որպեսզի ճնշի ժողովրդ-դական շարժումը¹⁰: Ժիշտ հաղորդումներ այն մասին, թե ինչ էր տեղի ունե-նում Սասունում, այն ժամանակ դեռևս չկային, որովհետև թուրքական իշ-խանությունը ծածուկ էր պահում այդ դեպքերը: Հետագայում Սասունում սուլթանական կառավարության արյունալի պործողությունները կոնկրետ փաս-տերով հաստատվում են Դիարբեքիրի ֆրանսիական փոխհյուպատոսի 1894 թ. հոկտեմբերի 5-ի հաղորդագրության մեջ, ուր նա նշում էր, որ Կոստանդնու-պուլից ստացված հրամանով Բիթլիսից Սասուն է ուղևորվել 4-րդ բանա-կային կորպուսի հրամանատարը, որը զլխավորում է մեծ քանակությամբ զինվորական ուժ՝ 15 հազար մարդ, կանոնավոր բանակի կազմով, դրան ավե-լացրած խաբված քրդերը, համիդիե զորախմբերը: Տեղի են ունենում ահա-

⁸ Հ. Հովհաննիսյան, Հատրնտիր, Երևան, 1953, էջ 91:

⁹ Տե՛ս Ա. Մատուրյան, Բանաստեղծություններ, Երևան, 1958, էջ 175:

¹⁰ См. АВПР, ф. канцелярия, оп. 470, д. 25, т. II, л. 498—500.

վոր մարտեր, «հայերը կռվում են հերոսաբար»։ Այնուհետև հաղորդվում է այն սոսկալի ողբերգության մասին, որ տեղի էր ունենում Սասունում։ Այդ հաստատվում է նաև Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի 1894 թ. հոկտեմբերի 25-ի ղեկուցագրով, որի մեջ նշված է. «Այստեղ... լուրեր են շրջում... Սասունի կաղալում հայերի կոտորածի մասին, ըստ որի կանոնավոր զորքերի և քրդական հեծյալ զնդերի կողմից հրկիզվել են շատ գյուղեր և սպանվել մի քանի հազար տղամարդ, կին և երեխա»¹¹։

Չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, սուլթանական պետությունը ջանում էր Սասունում տեղի ունեցած արյունալի դեպքերը զաղտնի պահել հասարակությունից։ Բարձր դուռը ամեն կերպ ճգնում էր ծածկել զործի իսկությունը, հնարավորություն չէր տալիս ասելու ճշմարտությունը, բոլոր միջոցները զործի էր գնում, որպեսզի անգամ եվրոպական թերթերի թղթակիցները չանցնեն Սասուն¹²։ Այդ բանի համար նա ոչ միայն վարչական միջոցների էր գիմում, այլև լուրեր էր տարածում, թե իբր Սասունում մոլեգնում է ժանտախտը։ Բարձր դուռը արգելք էր դրել Սասունի դեպքերով հետաքրքրվող նույնիսկ այնպիսի շափավոր թերթի առջև, ինչպիսին էր անգլիական «Թայմսը»։ Այդ մասին «Թայմս»-ում նշվում էր. «Ցավով հայտնում ենք, որ մեր ջերմ ու տեական ջանքերը՝ Սասունի դեպքերն անաշու քննելու նպատակով մեր հատուկ թղթակցի համար Հայաստան մեկնելու իրավունք ստանալու մասին, ապարդյուն անցան»¹³։

Չնայած թուրքական կառավարության ու նրա տեղական իշխանությունների այդ արգելքներին, այնուամենայնիվ Սասունի անցքերի վերաբերյալ բաղմամբիվ հողվածներ են լույս տեսնում անգլիական, ֆրանսիական, ռուսական, գերմանական, շվեյցարական, ամերիկյան և անդամ մեքսիկական թերթերում ու ամսագրերում։ Երբ եվրոպական մամուլն սկսում է առաջին լուրերը տպագրել Սասունի դեպքերի մասին, սուլթանական կառավարությունը շարժման մեջ է գնում իր բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին՝ դեսպաններին ու հյուպատոսներին և «հերքման» թղթեր գրում լրագրերում տպագրելու համար։

«Մոսկովսկայա վեդոմոստ»-ի 1894 թվականի նոյեմբերի 21-ի համարում տպագրված է Պետերբուրգի թուրքական գեսպանության՝ Սասունի դեպքերը հերքելու վերաբերյալ հաղորդումը, ուր ասվում էր. «Մոսկովսկայա վեդոմոստ»-ում տպագրվել է Սասունին վերաբերող ոչ ճիշտ հաղորդում։ Պետերբուրգի թուրքական կայսերական դեսպանությունը պարոն խմբագրին խնդրում է հերքել այդ սխալ տեղեկությունները...»¹⁴։

Բարձր դուռը, նրա գեսպանություններն ու դիվանագետներն անամոթաբար նույն կարգի ստահոգ հայտարարություններ ու հակահայկական բնույթ կրող հողվածներ են տպագրում նաև ռեակցիոն «Նովոյե վրեմյա», «Կավկազ» և ռուսական ու արևմտաեվրոպական մի շարք այլ հետադիմական թերթերում ու ամսագրերում, առանձնապես թուրքական մամուլում¹⁵։

¹¹ АВПР, ф. канцелярия, оп. 470, д. 25, т. II, лл. 550—501.

¹² Տե՛ս АВПР, ф. канцелярия, оп. 470, д. 26, т. I, лл. 56—57. Տե՛ս նաև «Մուրճ», № 3—4, 1895, էջ 534։

¹³ «Մուրճ», № 1, 1895, էջ 141։

¹⁴ «Московская ведомость», № 320, 1894.

¹⁵ Տե՛ս «Մշակ», № 138, 1894։

«Մշակ»-ում և հայկական այլ թերթերում բազմաթիվ օրինակներ են բերվում թուրքական «Թարիխ» ու «Սաբահ» թերթերից, թե ինչպես են դրանցում կեղծվում Սասունում կատարված ոճրագործությունների պատմությունը: «Սասանյան կառավարությունը,—գրում էր «Թարիխ»-ը, նպատակ ունի իր բոլոր հպատակների երջանկությունը և հանգստությունը դարձնել անվերջանալի... բայց,—ցինիկորեն ավելացնում է թերթը,—մի քանի նենգավոր, անդորրության ու հանգստության թշնամի հայեր երևան ելնելով, կպնդեն, որպես թե Սասունի մեջ օսմանյան զինվորների կողմից քանդվել են մի քանի հայ գյուղեր և այդ միջոցին եղել են մարդասպանություններ և նման այլ բաներ, որոնք բոլորն էլ... հրապարակված են եվրոպական թերթերի կողմից»¹⁶: Իսկ «Սաբահ»-ում նշվում էր. «Հիրավի ցավալի կգտնենք այն բանը, որ մի քանի խռովարար հայեր կխաբեն եվրոպական լրագրերը»¹⁷:

Թուրքական ջարդարար կառավարության պաշտպանության դերում հանդես են գալիս մի քանի եվրոպական ռեակցիոն թերթեր: 1895 թ. հունվարի սկզբից Փարիզում լույս տեսնող «Թուրքիա» շաբաթաթերթը, որի խմբագիրն ու հրատարակիչն էր ոման Նիկոլա Նիկոլայիդիս, մի թղթակցության մեջ Սասունում թուրքական բանակի զինվորների բարբարոսությունները համարում է «շառլատանների հնարած սուտ» և իրողությունը ներկայացնում է ամբողջովին խեղաթյուրված ձևով: Իր առաջնորդողներում թերթը հարձակվում է Սասունի դեպքերը ճշմարտացի կերպով լուսարանողների վրա¹⁸:

Նույն ոգով էր հանդես գալիս նաև Վատիկանի կիսապաշտոնական «Օբսերվատորին Ռոմանո» թերթը: Արևմտյան Հայաստանում կատարվող արյունալի անցքերի վերաբերյալ քրիստոնեական եկեղեցու կենտրոնի այդ թերթը 1895 թ. վերջերին տպագրում է մի հոդված, որի մեջ ոտնահարելով ամեն մի ճշմարտություն, քրիստոնեական անմեղության տեսք ընդունած, ձգտում էր հերքել այդ դեպքերի հայկական ու եվրոպական առաջադեմ թերթերի բացատրությունները¹⁹:

Սակայն հակառակ սուլթանական կառավարության համառ փորձերին՝ կեղծելու պատմական իրողությունը, հակառակ նրան ձայնակից մի քանի ռեակցիոն թերթերի ու անհատ անձնավորությունների ջանքերի, համաշխարհային առաջադեմ հասարակայնությունն ու մամուլը անարգանքի սյունին էին զամում սուլթանական արյունոտ կառավարության հայաջինջ քաղաքականությունը, ցույց տալիս այն բոլոր արհավիրքներն ու բռնությունները, որ թուրքական զորքն ու քրդական հրոսակախմբերը կատարում էին Սասունի նկատմամբ:

Սուլթանական կառավարության, նրա դիվանագետների հերքումների դեմ վճռական բողոքով հանդես եկան ոչ միայն հայասեր թերթերը, այլև մյուսները: Օրինակ, ռուսական «Գրաթգանին» օրաթերթը 1894 թ. նոյեմբերի 12-ի համարում այսպիսի հեզանքով էր գրում թուրքական կառավարության այդ հերքումների առթիվ. «Չար մարդիկ հնարել են, լրագրերը տարածել են, վրդաբուծել է հասարակական կարծիքը և բռնկել է փոթորիկը: Հիմա դուրս է գալիս, որ իբր Փոքր Ասիայում իրենք հայերն են, որ կոտորում են իրենց...»:

16 Տե՛ս «Մշակ», № 138, 1894:

17 Նույն տեղում:

18 Տե՛ս «Մշակ», 1895, փետրվարի 25:

19 Տե՛ս «Մշակ», 1894, դեկտեմբերի 8:

Ծվ, այնուհետև, ավելացնում է, որ թուրքական կառավարությունը զանազան ճանապարհներով, իր դեսպանների և կամ ուղղակի լրագրերին արած հաղորդագրությունների միջոցով անհիմն կերպով հերքում է բոլոր այն լուրերը, որոնք երևացին գլխավորապես ազգային մամուլի էջերում²⁰։

Թուրքական կառավարության վարքագծի նկատմամբ նույն կարծիքն է արտահայտում նաև «Ս. Պետերբուրգական վեդոմոստ»-ը։ Նկարագրելով սուլթանական իշխանությունների կատարած բռնություններն ու զազանությունները Արևմտյան Հայաստանում և առանձնապես Սասունում, թերթը նշում է, որ թուրքական կառավարության բոլոր հավաստիացումները ուղադրության արժանի չեն, և եվրոպական դիվանագիտությունը պետք է միջամտի՝ ի պաշտպանություն խաղաղ բնակիչների, որոնք զոհ են դառնում թուրքական բաշիրոզուկների զազանություններին ու բարբարոսություններին²¹։

Եվրոպական շատ թերթեր, հավաստի աղբյուրների հիման վրա, տալիս են թուրքիայում տեղի ունեցած սոսկալի կոտորածների նկարագրությունները և հաստատում, որ դրանք կատարել են թուրքական զորքերը։ Անգլիական «Սպիկեր» թերթի Կոստանդնուպոլսի թղթակիցը հայանում է թե. «Սասունի սարսափները իսկապես տեղի են ունեցել և կատարվել են կանոնավոր զորքերի ձեռքով՝ այն մարդկանց հրամաններով, որոնք հետո շքանշաններ են ստացել սուլթանից»²²։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Կեմպբելլի անունով ստացված ղեկուցագրերի հիման վրա «Թայմս» թերթը Բիթլիսում կատարված բարբարոսությունների մասին նշում է, որ փաշայի կարգադրությամբ Սասունում ոչնչացվել է 10 հազար հայ²³։

Սասունի դեպքերին է անդրադառնում նաև շվեյցարական մամուլը։ Ժնևի հայտնի «Լա Ժնևուազ» թերթի 1895 թ. հունվարի 16-ի համարում ասվում է, որ Սասունում «եղեռնագործությունները սկսված են ոչ թե 1894 թ., այլ մի քանի տասնյակ տարիներ առաջ, իսկ 1878 թ. այսինքն՝ հանրածանոթ 61-րդ հոդվածի դրվելուց հետո, այդ հարստահարություններն ավելի անգութ կերպարանք են ստացել և ավելի հաճախ կրկնվելով մի հետաքրքրական երևույթ են ներկայացնում»²⁴։ Թուրք աղաները և պաշտոնյաները, քուրդ ու շերքեզ բեգերը, նշված է այնտեղ, ահա այդ բոլոր ոճիրների, ավարառությունների, ամեն տեսակ սրբապղծությունների, բռնաբարությունների, սպանությունների, հրդեհների իսկական հեղինակները։ Ամփոփելով իր միտքը, թերթը նշում է, որ թուրքական կառավարությունը «ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում, որպեսզի Բեռլինի պայմանագիրը ստորագրողներին ասի. «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես գոյություն չունի հայկական հարցը»²⁵։

Հայկական հարցով հետաքրքրվում էին նաև անդրատլանտյան երկրներն ու նրանց մամուլը։ Մեքսիկայում հրապարակվող «Էխո դյու Մեքսիկ» թերթը

20 Տե՛ս «Гражданин», 1894, դեկտեմբերի 12։ Տե՛ս նաև «Մուրճ», № 11—12, 1894, էջ 1694—1695։

21 Տե՛ս «Մուրճ», № 11—12, 1894, էջ 1695—1697։

22 Տե՛ս «Մշակ», № 11, 1895, տե՛ս նաև «Մուրճ», № 1, 1895, էջ 153։

23 Տե՛ս «Նոր դար», № 197, 1894։

24 Տե՛ս «Մշակ», 1895, հունվարի 24։

25 Տե՛ս նույն տեղում։

մի հողաված է նվիրում այդ հարցին, որից առանձին կոտորներ թարգմանաբար տպագրել է «Մշակ»-ը: Այդ հողավածում թերթը հարցնում է, թե ո՞րն է Հայոց հարցի լուծման ամենագործնական միջոցը և նշում, որ շատերը դիտեն այդ դեպքերը, որոնք կատարվեցին Հայաստանում և որոնց ընթացքում զոհերի թիվը հասավ 10 հազար մարդու: Այնուհետև թերթն ավելացնում է, որ Թուրքիան անընդունակ է պաշտպանել կարգն ու խաղաղությունը իր սեփական նահանգներում: Հայոց հարցի ամենալավ, միակ հնարավոր լուծումը, նշում է թերթը, կլինի՝ զիջել Ռուսաստանին օսմանյան դրոշակի տակ մնացած Հայաստանի մասը²⁶:

Սասունի դեպքերի մասին անգլիական «Նյուկաստրի Դեյլի Զոունել» թերթի թղթակիցը Բիթլիսի գավառի հնձորով գյուղից մանրամասնորեն հազորդելով բոլոր դեպքերը, հանգում էր հետևյալ եզրակացության. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, երկար ժամանակ նախապատրաստված և, վերջապես, գործադրված այն դիտավորություններ, որ բոլորովին ոչնչացնեն այդ երկրի 30—40 հազար բնակիչներին: Եւ կանխորոշված մի փորձ էր իսպառ ջնջելու աշխարհի երեսից Սասունի բնակիչներին, և մի րոպե անգամ չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը հղացվել է Կ. Պոլսի բարձրագույն կառավարության գիտություններ և նրա կատարյալ համաձայնությամբ²⁷:

Այլ դիրք բռնեց գերմանական մամուլը, որը երկար ժամանակ կատարյալ անտարբերություն էր ցուցաբերում դեպի այդ հարցը, կամ ուղղակի տաշտպանում էր սուլթանական կառավարությանը:

Միայն հետագայում, երբ այլևս անկարելի էր ծածկել Սասունի ազատասեր ժողովրդի նկատմամբ կիրառված գազանությունների հետքերը, գերմանական «Ֆոսիշե ցայտունգ» թերթը գրում էր. «Հայկական եղեռնագործությունները, որոնք այլևս անկարելի է ուրանալ, մեծ դժվարություններ պետք է պատճառեն Թուրքիային»:

Մամուլի արձագանքների ու ահազանգումների հետ միասին, Սասունի կոտորածների առթիվ երկրագնդի բոլոր մասերում տեղի են ունենում բողոքի ցույցեր, միտինգներ և ժողովներ: Դրանք մերկացնում էին սուլթանական կառավարության, թուրքական փաշաների ու քրդական բեգերի ոճրագործությունները:

Թուրքական բանակի կողմից Սասունում կատարված արյունալի ջարդերը հուզումներ են առաջացնում նաև ԱՄՆ-ի հասարակական առաջավոր շրջաններում, առանձնապես ամերիկահայերի շրջանում: 1894 թ. նոյեմբերի 26-ին, ինչպես նշում են ժամանակի հայ և օտարերկրյա թերթերը, Բոստոնի նշանավոր «Ֆենուիլ-հուլ» կոչված շենքում տեղի է ունենում 1893 թ. Բոստոն քաղաքում կազմակերպված «Հայոց միացյալ բարեկամների ընկերության» ժողովը²⁸: Այդ ժողովը բացում է «Քրիսչյան օեջիսար» թերթի խմբագիր Պարուզը, ապա ելույթ է ունենում Ամերիկայի Միացյալ Նահանգների հայտնի կին գրականագետ Զուլիա Հաունը, որը խոսում է սուլթանական արյունոտ յծի տակ գտնվող արևմտահայերի ծանր վիճակի ու Սասունի կոտորածների

26 Մեջբերումը կատարված է «Մշակ»-ի 1895 թ. փետրվարի 25-ի համարից:

27 Տե՛ս «Մշակ», 1895, մայիսի 4:

28 Տե՛ս «Մուրճ», № 11—12, 1894, էջ 1700:

մասին²⁹։ Նա իր ճառի վերջում քաղաքակիրթ մարդկությանը կոչ է անում՝ սանձահարել սուլթանական պետության բռնություններն ու դազանությունները։ Ժողովը որոշում է։

1. Խնդրել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Կլիվլենդին քննել այդ խնդիրը և կամ Եվրոպայի վառավարությունների միացյալ հանձնաժողովի հետ ներկայացուցիչներ ուղարկել Սասուն։

2. Բողոքել թուրքական կառավարության ստեղծած հանձնաժողովի դեմ, որովհետև ներկայացված կազմով հանձնաժողովը անվստահելի է, և եվրոպական պետությունների պարտքն է անկախ բնություն կատարել ու իրադրությունը պարզել քաղաքակրթված աշխարհի առջև։

3. Դիմել Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին, խնդրելով իրագործել տալ այդ դաշնագրի 61-րդ հոդվածը։ Ժողովն անհրաժեշտ է համարում իր որոշումը հրապարակել մամուլում³⁰։

Նույն կարգի ժողովներ ու միտինգներ են գումարվում նաև ուրիշ երկրներում։

Այդ միտինգներում ու ժողովներում հաճախ զեկուցումներ էին կարդացվում նաև հայ ժողովրդի պատմական անցյալի, կուլտուրայի, տնտեսական ու քաղաքական վիճակի և այլ հարցերի մասին։ Այսպես օրինակ, 1895 թ. ապրիլի 9-ին Բիրմինգհամում (Անգլիա), Զեզերման Ռայտի նախագահությամբ տեղի ունեցած ժողովում պրոֆ. Կ. Թումայանը, որը լավ ծանոթ էր Թուրքիայում տիրող կարգերին, մի զեկուցում է կարդում հայերի դրության վերաբերյալ և նկարագրում այն սարսափներն ու ոճրագործությունները, որ տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանում։ Նման ժողովներ են գումարվում նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում և այլ քաղաքներում³¹։

Բերված օրինակներից պարզ երևում է, որ սուլթանական կառավարության դեմ ուղղված բողոքի միտինգներն ու ցույցերը կազմակերպվում էին հասարակության առաջադեմ տարրերի կողմից և գերազանցապես այն վայրերում, ուր ապրում էին հայերը։

Սասունի հերոս ժողովրդի դեմ սուլթանական կառավարության գազանությունները խորը զայրույթ են առաջացնում առանձնապես Ռուսաստանի և արտասահմանյան երկրների առաջադեմ երիտասարդության, մասնավորապես ուսանող երիտասարդության, կուլտուրայի ու գիտության առաջադեմ գործիչների շրջանում։

Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Մոսկվայի մի խումբ ուսանողների՝ հայերին ուղղած նամակը, որի մեջ նրանք մերկացնում էին Թուրքիայի և մեծ պետությունների ստոր քաղաքականությունը, ջերմորեն ողջոճում արևմրտահայերի հերոսական պայքարը սուլթանական բռնակալության դեմ։ «Մեր բոլոր համակրանքը,—ասված է նամակում,—ձեր կողմն է՝ հանուն ազատության կռվողների կողմը։ Մեր զգացմունքներն այլ կերպ էլ չէին կարող լինել, քանի որ մենք ևս կրում ենք բռնակալության ճնշումը, թեև ոչ այնպիսի սարսափելի ձևով, ինչպես վերջին ժամանակները գործ դրվեց ձեր եղբայրների գլխին... Մեր խոսքերի տակ կստորագրեն բոլոր այն երիտասարդները, որոնք

29 Տե՛ս նույն տեղում։

30 Տե՛ս նույն տեղում, նաև «Մշակ», 1894, № 132, № 138։

31 Տե՛ս «Մշակ», № 17, 1895։

դուրս են եկել բանվորական դասակարգից, ինչպես և կմիանան մեզ հետ մնացյալ մասի առաջադիմական տարրերը:

Ընկերներ, մենք անկեղծ սրտով հաջողություն ենք ցանկանում ձեր ազգային գործերին, որը միայն սկիզբն է և առհավատչյան ապագա ժողովրդողական գործունեության: Ներկա ընդհանուր, դժբախտաբար, մենք մեր համակրանքը միայն սրանով կարող ենք արտահայտել, ձեզ հայտնի է, որ մեր հայրենիքում ևս եռ է գալիս խոսկոխ, որը նորանոր զոհեր է պահանջում... Մենք այժմ իսկ պատրաստ ենք սիրով ողջունել այն ընդհանուր, երբ ձեռք-ձեռքի կտա ուսանող երիտասարդությունը, ազատ Հայաստանի և ազատ Ռուսաստանի»³²:

Նույն ոգով է գրված նաև Մոսկվայի լեհ երիտասարդների ընկերության նամակը, որտեղ ասված է. «Տաճկահայերի կրած տառապանքները վաղուց ի վեր արձագանք էին գտնում մեր սրտերում: Տաճիկ կառավարության ձեռք առած բարբարոսական միջոցները, դժբախտ ժողովրդի հուսահատական ճիւղերը, այս բոլորը չափից դուրս պարզ և ակնհայտ կերպով նկարագրում են մեզ, մեր սեփական դրության պատկերը և մեր անկախության համար վարած կռվի պատմությունը... Ձեր հաղորդածը, որ մեծ պետությունների միջոցառումը ոչ մի ազդեցություն չունեցավ տաճիկ տիրապետության լծի տակ հեծող ձեր հայրենակիցների դրության բարելավման վրա, մեզ շատ վշտացրեց, բայց չզարմացրեց: Ավելորդ է որևէ բան սպասել պետություններից... որ մեծ պետությունները գործ ունեն միայն ուժեղների հետ, իսկ եթե թուլյուններն ենք պաշտպանում են, այդ անում են արևմտյան, երբ հարկավոր է լինում իրենց վտանգավոր մրցակցին տապալել... Մենք ի բոլոր սրտե ցանկանում ենք հայերին զորանալ, ամրանալ ներկա դժբախտությանց մեջ, նորից հավաքել իրենց ուժերը, որպեսզի ապագայում հաջողությամբ կռվեն իրենց մարդկային և ժողովրդական իրավունքների համար...»

Թող ձեր ժողովրդի ներկա տառապանքները դառնան նրա ապագա ուժի աղբյուրը»³³:

Սասունի ապստամբության և նրան հաջորդած իրադարձությունների առնչությամբ երկրագնդի տարբեր վայրերում ընդհանուր հետաքրքրություն է առաջանում հայ ժողովրդի պատմության, կուլտուրայի, սոցիալ-քաղաքական կյանքի նկատմամբ: Այդ տարիներին էր, որ գիտության, կուլտուրայի և գրականության քաղմաթիվ գործիչները Հայաստանին նվիրված հրապարակային գասախոսությունների, հոդվածների, առանձին ուսումնասիրությունների միջոցով իրենց ժողովուրդներին ծանոթացնում էին հայ ժողովրդի անցյալ պատմությանը, պարզաբանում էին նրա կատարած գերը մարդկության կուլտուրայի զարգացման գործում, նշում օսմանյան լծի տակ կեղեքվող ժողովրդի ծանր վիճակը և թուրք աղաների ու քուրդ բեգերի դաժանությունները, տալիս էին թուրքական կանոնավոր քանակի կողմից կատարված արյունալի ջարդերի ամբողջ պատկերը: Այդ գործիչներից էին Իսլանդացի պրոֆ.

³² ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտադիր, ֆ. 4033, ց. 1, գ. 1247, թ. 1—2:

³³ ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտադիր, ֆ. 4033, ց. 1, գ. 1247, թ. 4:

³⁴ Տե՛ս է. Դ ի լ լ յ Ն, Положение дел Турецкой Армении, 1895.

էմիլ Դիլլոնը³⁵, գանիացի Գեորգ Բրանդենսը³⁶, Բրյուսելի աշխարհագրական ընկերության նախագահ Ջ. Լեկլերը³⁷, Վիեննայի կայսերական համալսարանի պրոֆեսոր-դոկտոր Վիլհելմ Տոմաշեկը³⁸, միջազգային իրավունքի խոշոր մասնագետ Ս. Գ. Ռոլեն Ժեկմենը³⁹, ֆրանսիացիներ՝ Ամիլգար Զիբրանին, Պիեռ Քիյառը, շվեյցարացի Ժ. Ֆուվոն, նշանավոր սոցիալիստ Ժան Ժորեսը, գերմանացի Իլզե Ֆրապան, Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր Բոլ էռերսը, Ֆրանսիս Բրեսանսեն, Անատոլ Ֆրանսը, Մաքսիմ Դորկին, Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շատ գործիչներ և շատ ուրիշներ։ Սուլթանական արյունարբու կառավարության դեմ բողոքի ձայն է բարձրացնում ֆրանսիացի հայտնի կին գրող Սենթինը։ Դատապարտելով արևմտահայերի դեմ կիրառվող դաժանությունների նկատմամբ արևմտյան տերությունների սառն անտարբերությունը, նա իր հոգվածներից մեկում դրում է. «Բայց ես զարմացած եմ լուծյան դեմ. եսասիրությունից բխած այն եղեռնագործ ապատիայի դեմ, որ դարձնում է աչքերը, փակում ականջները, օն, ոտի ել. դու որ չես ուզում նայել, կնայես, երբ ես ստիպված կլինեմ բռնել քո ականջներից, որ դարձնեմ քո անտարբեր դեմքը, որ ստիպեմ քեզ նայել սոսկումի՜ն դեմառդեմ, ողջ սոսկումը կոտորածի։ Դու, որ չես ուզում լսել, դու կլսես աղմուկները, աղաղակը, մահու հնչյունները և խռպոտ աղոթքները օրհասականների»³⁹։

Մեր բերած օրինակների ոչ լրիվ ցանկը որոշակի ցույց է տալիս, որ համաշխարհային առաջադեմ հասարակայնության համակրանքը արևմտահայության, Սասունի հերոս լեռնականների կողմն էր, որ աշխարհի հասարակական կարծիքը անողորմաբար դատապարտում էր Թուրքիայի բռնակալական կարգերը և սուլթան Աբդուլ Համիդին հռչակում որպես մեծ ոճրագործ։

Բացահայտելով սուլթանական կառավարության ոճրագործ քաղաքականությունը արևմտահայերի և հատկապես սասունցիների նկատմամբ հարկ ենք համարում նշել, որ Սասունի դեպքերի ժամանակ Թուրքական կառավարության մեջ առաջանում է մի թույլ հոսանք, որը գլխավորում էին Սուրեյա և Օսման փաշաները և որը դեմ էր Սասունում գործադրվող դաժանություններին։ Սակայն այդ հոսանքը անուժ էր, կառավարական շրջաններում նրա հետևից համարյա ոչ ոք չէր գնում։ Դեռ ավելին, սուլթանի և Բարձր դռան կողմից ենթարկվում էր խիստ հալածանքների, ուստի և ոչինչ անել չկարողանալով, նա ևս միացավ ընդհանուր հոսանքին։

Արևմտյան Հայաստանում, մատնավորապես Սասունում կատարվող դեպքերին ուշի-ուշով հետևում էին արևմտյան տերությունները, որոնցից յուրաքանչյուրն աշխատում էր օգտագործել հարմար առիթը, ձևանալ հայերի բարեկամ, միջամտել գործերին և դրանով զիջումներ կորզել Թուրքիայից, նորանոր դիրքեր նվաճել Առաջավոր Ասիայում, Մերձավոր ու Միջին արևելքի վրա իր հեգեմոնիան տարածելու կամ ամրապնդելու համար։

Այդ հարցում առանձնապես մեծ ակտիվություն էին հանդես բերում Ֆրանսիան և առանձնապես Անգլիան։ Անգլիան ձգտում էր ստիպել Թուրքիային իր ցանկացած ձևով լուծելու հզիպտական հարցը, նորանոր տնտեսական դիր-

35 Տե՛ս Գ. Բրանդենս, Հայկական հարցը, Ժնև, 1907։

36 Տե՛ս Զ. Լեկլեր, Поездка на Арабат, Վիեննա, 1896։

37 Տե՛ս Վ. Տոմաշեկ, Սասունը և Տիգրիսի աղբերաց կողմերը, Վիեննա, 1896։

38 Տե՛ս Մ. Գ. Ռոլեն Ժեկմեն, Армения, армяне и трактаты, М., 1897։

39 «Գորոշակ», № 2, 1895։

քեր նվաճել Թուրքիայում, ամրանալ Արևմտյան Հայաստանում, ամբողջովին իրեն ենթարկել Մերձավոր ու Միջին արևելքի երկրները, կանխել ցարական Ռուսաստանի ազդեցության տարածումն այդ շրջաններում:

Անգլիայի այդ ձգտումներին դեմ էր ցարական Ռուսաստանը, որն աշխատում էր խանգարել Անգլիային և նրան դուրս մղել Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից: Այդ պատճառով էլ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո ցարական կառավարությունը մի որոշ ժամանակ դադարեց Կոստանդնուպոլսի և նեղուցների գրավման մասին մտածելուց. այժմ նրան հարկավոր էր օգնել սուլթանին պահելու Միջերկրական ծովից Սև ծով տանող դարբասը⁴⁰: Ուստի 1890-ական թվականներին նա հաճախ հանդես էր գալիս Թուրքիայի շահերի պաշտպանի գերում՝ ընդդեմ Անգլիայի:

Ավելի ակտիվ էր գործում Գերմանիան, որը իրեն ձևացնելով մոսկովյանների հավատարիմ բարեկամ, աշխատում էր Թուրքիան իր ազդեցության տակ գցել: Եվ իրոք, մի շարք հանդիպումների ու բանակցությունների միջոցով Գերմանիան Թուրքիայում ձեռք է բերում որոշ արտոնություններ, իսկ 90-ական թվականների սկզբներին՝ արդեն Թուրքիայում երկաթգիծ կառուցելու մենաշնորհ: Սկսած այդ շրջանից էլ Թուրքիան թեքվում է Գերմանիայի կողմը:

Եթե մի կողմ դնենք եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող ներքին հակասություններն ու անհամաձայնությունները, ապա կարելի է ասել, որ արդեն 90-ական թվականներին ապագա համաշխարհային պատերազմի համար ձևավորվող երկու հակամարտ խմբավորումների միջև պայքար էր գնում Թուրքիայի համար, որին ամեն մեկն աշխատում էր իր կողմը գրավել:

Ինչպես նշում է պրոֆ. Ե. Սարգսյանը «Եվրոպական պետությունները Թուրքիայի համար մղած պայքարում նպատակ ունեին ուժեղացնել իրենց քաղաքական դիրքը և ձեռք բերել նոր հնարավորություններ՝ Օսմանյան պետության ներքին քաղաքական կյանքի վրա ազդելու համար»⁴¹:

Այդ նպատակներով առաջնորդվելով, եվրոպական պետությունները Սասունի անցքերի առիթով առաջ են քաշում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և սկսում մշակել հայկական վիլայեթների բարենորոգումների ծրագիրը, ինչպես նաև պահանջում են քննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն:

Սուլթանական կառավարությունը շատ լավ հասկանալով եվրոպական պետությունների այդ խաղը, դիմում է խարդախ միջոցների: Նա հայտարարում է, որ 1894 թ. նոյեմբերի 20-ին կազմել է մի քննիչ հանձնաժողով, որի մեջ այդ հայտարարության համաձայն, մտնում էին սուլթանի թիկնապահ Ֆերիկ Աբդուլլահ փաշան, Կ. Պոլսի Էննքեա սանդղի տնօրեն Էոմեթ բեյը, ներքին գործերի մինիստրության մամուլի դիվանի առաջին քարտուղար Մեջիդ էֆենդին և Միրլիվա Նաֆիզ Թեֆիկ փաշան⁴²: Բայց, որովհետև ոչ ոք չէր հավատում, թե Թուրքիան կարող է լինել անաչառ քննություն կատարող, ուստի պահանջվեց, որ այդ հանձնաժողովի մեջ մտցվեն եվրոպական մեծ պետությունների ներկայացուցիչները, որը սակայն կատեգորիկ կերպով մերժվեց Թուրքական կառավարության կողմից:

⁴⁰ См. «История дипломатии», т. II, Москва, 1963, стр. 334.

⁴¹ Ե. Սարգսյան, Օսմանյան կառավարության ազդարարին քաղաքականությունը 19-րդ դարի երկրորդ կեսին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 7, էջ 40—41:

⁴² Տես «Մուրճ», № 11—12, 1894:

Ինչպես նշեցինք, եվրոպական մեծ պետությունները Սասունի անցքերի ժամանակ հանդես եկան կեղծ քաղաքականությամբ, նրանք անհրաժեշտ վրճարականություն ու շահագրգռվածություն հանդես չբերեցին Սասունի և ընդհանրապես արևմտահայերի վիճակը բարելավելու ուղղությամբ: Սասունի շարժումից մի շաբաթ անց Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպանն իր կառավարությանը հաղորդում էր. «Սուլթանը հարցում արեց իմ կարծիքի մասին: Ես պատասխանեցի, որ անհրաժեշտ է բարենորոգումներ մտցնել Հայաստանի կառավարման մեջ, վերջ տալ համիդիական ղեղերի կողմից կատարվող ոճրագործություններին, վերականգնել սուլթանի բարձր հեղինակությունը, զգացնել տալ նրա բարձր իշխանությունը»: Այնուհետև դեսպանը նշում է, որ «պ. Նելիդովը (ռուս. դեսպան—Կ. Թ.) պատասխանեց նույն արտահայտություններով, ինչպես որ ես: Ավստրիական դեսպանն ասաց ինձ՝ «Մենք ամբողջապես կողմնակից ենք Ձեր կարծիքին»⁴³:

Հարկավոր է, սակայն, նշել, որ ֆրանսիական դեսպանի՝ սուլթանի բարձր իշխանությունը զգացնել տալու պահանջը, այնուամենայնիվ, տարօրինակ էր, որովհետև բոլորին, այդ թվում և ֆրանսիական դեսպանին, շատ լավ հայտնի էր, որ Սասունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում տեղի ունեցող կոտորածները կազմակերպել ու ոգեշնչել էին սուլթանական կառավարությունն ու ինքը՝ Արզուլ Համիդը, որոնք և իրոք զգացնել էին տվել «սուլթանի բարձր իշխանությունը», բայց ոչ թե համիդիներին, այլ բազմաշարժար հայ լեռնականներին:

Եվրոպական դեսպանները մտահոգված էին թուրքական սուլթանի «բարձր իշխանության պահպանման» հարցով, իսկ ճայ գյուղացիների ծանր կյանքը և նրանց նկատմամբ կիրառվող բռնություններն ու ջարդերը երբեք էլ նրանց չէին հետաքրքրում: Օտարերկրյա հյուպատոսների միսիոներների քթի տակ «հավատարիմ հպատակ» հայերը կախվում էին:

Սասունի դեպքերը հանգամանորեն ու ճշմարտացիորեն քննելու և դրանց իսկությունը պարզելու գործում խոչընդոտներ էին հարուցում ոչ միայն սուլթանն ու նրա կառավարությունը, այլև Գերմանիան, Ավստրիան: Սրանք ամեն կերպ աշխատում էին արդարացնել սուլթանական կառավարության դաժանությունները արևմտահայերի, առանձնապես սասունցիների նկատմամբ: Դրա հետևանքով բավական երկար ժամանակ ձգձգվում էր Սասունի դեպքերը քննող հանձնաժողովի ստեղծման հարցը: Այդ հարցի համակարգչական քննությունն առաջարկը չի ընդունվում ոչ միայն Թուրքիայի, այլ նաև եռյակ դաշնագրության (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա) դիմադրության պատճառով:

Միայն վերջում Բարձր դուռը ստիպված է լինում համաձայնել, որ իր կազմած հանձնաժողովում մասնակցեցին նաև Լրեք պետությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Այդ հանձնաժողովում Անգլիայի ներկայացուցիչ է նշանակվում եվրոպական Թուրքիայի Մոնաստիր քաղաքի փոխհյուպատոս Շիպլերը, Ռուսաստանի ներկայացուցիչ՝ Կարինի փոխհյուպատոս Պրժևալսկին, իսկ Ֆրանսիայինը՝ Կոստանդնուպոլսի ֆրանսիական հյուպատոսարանի թարգման Վիլբերտը⁴⁴: Հանձնաժողովի

⁴³ «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, отд. II, стр. 98.

⁴⁴ SL՝Ս АВПР, ф. канцелярия, оп. 470, д. 26, т. I, л. 89—91. Տե՛ս նաև «Նոր դար», № 219, 1894, «Մուրա», № 1, 1895, էջ 146, «Մշակ», 1895, դեկտեմբերի 20:

գործունեությունը, ինչպես այդ ցույց էր տրվում սուլթանի իրադրում (հրովարտակ), պետք է սահմանափակվեր Սասունի շրջանակով:

Բարձր դռան ստեղծած հանձնաժողովի կազմում երեք պետությունների այդ ներկայացուցիչները պետք է սահմանափակվեին վկաներին հարցաքննելով և իրենց կարծիքը թուրքական իշխանություններին ու երեք մեծ տերություններին հաղորդելով:

Չնայած բազմաթիվ ու բազմատեսակ խոչընդոտներին, կաշառքին, բռնություններին ու ահաբեկումներին, այնուամենայնիվ, քննիչ հանձնաժողովին մասնակցող մեծ տերությունների ներկայացուցիչները հաստատում են, որ հայկական ջարդերը կատարվել են սուլթանական Թուրքիայի կանոնավոր զորքի կողմից և նրա պետերի հրամանով: Այդ բոլորը հաստատվում է ականատեսների պատմածներով, փաստացի նյութերով և անգամ իրենց՝ թուրք զինվորների վկայությամբ: Դրանք շարադրված են քննիչ հանձնաժողովին մասնակցող երեք մեծ պետությունների ներկայացուցիչների զեկուցադրում⁴⁵: Սասունի կոտորածներից մի կերպ ազատված հայերի պատգամավորությունները, ինչպես գրում էին ժամանակի եվրոպական և հայկական թերթերը, ներկայանում են մեծ տերությունների ներկայացուցիչներին և ամբողջ կոտորածի պատմությունը հանձնում նրանց:

1895 թ. հուլիսի 16-ին մեծ պետությունների ներկայացուցիչները, որ ունեցել էին 108 նիստ և լսել 190 վկայի⁴⁶, ավարտում են իրենց աշխատանքը և հուլիսի 28-ին եվրոպական մեծ տերություններին ու Բարձր դռանը ներկայացնում կոլեկտիվ մի զեկուցադիր, որի մեջ հանրագումարի էր բերվել այն բոլորը, ինչ նրանց հաջողվել էր իմանալ:

Սասունի կոտորածների մասին համաշխարհային մամուլի, կուլտուրայի, դիտությունների առաջագեծ գործիչների բողոքների և այլ հանգամանքների ճնշման տակ սուլթանական կառավարությունն արտաքուստ փոխում է իր վերաբերմունքը արևմտահայության նկատմամբ՝ առերես «բարյացակամ» ու «զթոտ» է դառնում: Որպես դրա ապացույց, սուլթանական կառավարությունը Զեքի փաշային հեռացնում է Բիթլիսի վիլայեթից, անհամեմատ մեղմ վճիռ է կայացնում Մուրատի և մյուս բանտարկյալների նկատմամբ, հայերին «ներում» է շնորհում և թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը: Այդ բոլորով հանգերձ, նա ամեն կերպ ջանում էր ցույց տալ, թե իբր կատարվածը թյուրիմացության արդյունք է, քրդերի անիրավության հետևանք: Բացի այդ, նա խոստանում է նյութական օժանդակություն ցույց տալ Սասունը վերականգնելու համար⁴⁷:

Կառավարության նպատակը պարզ էր, դրանով նա ձգտում էր սիրաշահել ու ապա սաստել հայերին: Իսկ երբ այդ հարցի շուրջն սկսեց աղմուկ բարձրանալ և գործը միջազգային բնույթ ստանալ, առանց հապաղելու, Բարձր դուռը կոտորածի մեղքը բարդեց քրդերի վրա և առիթն օգտագործելով, սկսեց հալածել նրանց՝ շատերին ոչնչացնելով ու բանտարկելով, իսկ մյուսներին քշելով Սիրիայի ու Իրաքի անապատները:

⁴⁵ См. АВПР, ф. политархив, д. 3448, л. 199—205; ф. канцелярия, оп. 470, д. 26, т. II, л. 481—519.

⁴⁶ Տե՛ս АВПР, ф. политархив, д. 3448, л. 205. Տե՛ս նաև «Братская помощь», стр. 100.

⁴⁷ Տե՛ս АВПР, ф. канцелярия, оп. 470, д. 26, т. I, л. 175.

Որ հայաջինջ քաղաքականությունն առաջ մղելու նպատակով սուլթանական կառավարությունը որոշ զինուորներ արեց եվրոպական մեծ տերություններին, բավարարեց նրանց պահանջները և իրեն ավելի ազատ զգալով արևմտահայերի նկատմամբ անցավ զանգվածային կոտորածներին, որոնք մեծ չափերի հասան 1895—1896 թվականներին:

К. З. ТАРОЯН

ОТКЛИКИ НА ВОССТАНИЕ 1894 ГОДА В САСУНЕ

Р е з ю м е

В августе 1894 г. вспыхнуло восстание среди армянского населения Сасуна против деспотических порядков султанской Турции. Восстание было подавлено 4-й турецкой армией во главе с Зеки Пашой.

По официальным данным, в Сасуне было разрушено свыше 48 армянских сел, убито около 15 тысяч человек, 14 тысяч 600 человек оказалось без крова и пищи. Все имущество армян было захвачено турками. После сасунской резни 8 тысяч солдат регулярной турецкой армии, войдя в Мушскую долину, захватили армянские села, угоняя жителей с родных мест. Было разорено более 20 армянских сел.

Все прогрессивное человечество с гневом осудило политику геноцида, проводимую в то время турецким правительством. На события в Западной Армении активно откликнулись выдающиеся деятели науки, литературы и искусства, армянская учащаяся молодежь в России и за границей.

Султанское правительство старалось держать в тайне от общественности кровавую бойню в Сасуне. Несмотря на это, сасунские события нашли свое отражение в многочисленных статьях и книгах, изданных в Англии, Франции, России, Германии, Швейцарии, США, Мексике.

За событиями в Западной Армении, в частности в Сасуне, следили западные державы, стремившиеся использовать их для упрочения своих позиций на Ближнем и Среднем Востоке. Особенно большую активность проявили Англия, Германия и Франция.

В этих благоприятных для себя условиях султанское правительство перешло к массовому уничтожению западных армян, достигшему огромных масштабов в 1895—1896 гг.